

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ  
ԳԱՅԻՐԷԻ

---

ԳՐԱԴԱՐԱՆ  
ՏՊԱՐԱՆ ՍՈՒՆԿԱՆ ՄԵՍՐՈՊ  
1933

## ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՂԲԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

ԳԱՀԻՐԷԻ

## ՆՊԱՏԱԿ

1.— Աղքատախնամ Ընկերութեան նըպատակն է խնամել Գահիրէի Հայ աղքատները:

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

2.— Ընկերութեան անդամ կ'ընտրուին ամէն անհատ, առանց սեռի խտրութեան, որ կ'ընդունի ներկայ կանոնադրութեան տրամադրութիւնները եւ կը վճարէ առնուազն ամսական 2 դրշ. ամսավճար:

3.— Ընկերական ամէն իրաւունք կը վայելեն այն ամէն անդամները՝ որոնք Ընդհանուր Ժողովներու գումարումի թրւականէն առնուազն երեք ամիս առաջւան իրենց ամսավճարը վճարած են, իսկ նոր արձանագրուած անդամները նոյն իրաւունքները վայելելու համար պէտք է առնուազն Ընդհանուր Ժողովի թուականէն երեք ամիս առաջ անդամ արձանագրուած



եւ կանխիկ կամ ամսէ ամիս վճարած ըլ-  
լան իրենց բաժնեգիրները:

4.— Մէկէ աւելի բաժնեգիրն վճարող  
անդամները միայն մէկ ձայն ունին:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

### ՆԱԽԱԳԱՀ

5.— Եզիպտոսի Հայոց Առաջնորդը կամ  
Տեղապահը նախագահն է Ընկերութեան թէ  
Ընդհանուր եւ թէ Գործադիր Ժողովնե-  
րուն:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

6.— Ամէն վճարող անդամ, որ հայ է  
եւ 20 տարին լրացուցած, անդամ է Ըն-  
կերութեան Ընդհանուր Ժողովոյն, որ Ըն-  
կերութեան ընտրող եւ համարաւու մար-  
մինն է:

7.— Ընկերութեան Ընդհանուր Ժողովը  
կը գումարուի երկու տարին անգամ մը,  
ընտրելու համար Գործադիր Ժողովի Ըն-  
կերութեան կողմէ ընտրուելիք անդամնե-  
րը, եւ տարին անգամ մը լսելու համար  
Գործադիր Ժողովի տարեկան համարա-

տուութիւնը եւ հաշիւները քննելու եւ վաւերացնելու համար:

Բացառիկ նիստեր կրնան գումարուիլ երբ Գործադիր ժողովը կամ Դիւանը հարկ տեսնեն կամ Ընկերութեան անդամներէն 20 հոգի գրաւոր կերպով պահանջեն:

8.— Ընդհանուր ժողովին առաջին հրաւերին կէսէն մէկ աւելի անդամներու եւ երկրորդ հրաւերին գոնէ 20 անդամներու ներկայութիւնը բաւական է ժողովը օրինաւոր նկատելու համար:

Օրակարգի խնդրոց միակ նիստի մը մէջ չսպառուելու պարագային յաջորդ նիստերը առաջինին շարունակութիւնը կը համարուին:

9.— Ընդհ. ժողովը ունի Դիւան մը, որ կը բաղկանայ Ա. եւ Բ. Ատենապետներէ եւ Ա. եւ Բ. Ատենադպիրներէ, որոնք չորս տարուան համար կ'ընտրուին:

10.— Դիւանը պարտաւոր է՝

Ա. Ընդհ. ժողովի տարեկան եւ երկտարեկան, սովորական ինչպէս նաեւ Շրջ յօդուածով նախատեսուած բացառիկ նիստերը գումարելու հրաւեր ընել.

Բ. Դիւանին եւ Գործադիր ժողովոյ մէջ տեղի ունեցած ամբողջական կամ մասնակի փոփոխութիւնները ժամանակին տեղեկագրել Քաղ. ժողովին.



Գ. Հսկել օրէնքին անթերի գործադրութեանը.

Դ. Գործադիր ժողովոյ տարեկան տեղեկագիրը եւ հաշուեկշիռը պահանջել եւ ներկայացնել Ընդհ. ժողովին.

Ե. Գործադիր ժողովի անդամներէն եթէ շրջանը լրանալէ առաջ հրաժարողներ գտնուին, անոր կազմը ամբողջացնելու համար հրաւիրել փոխ անդամներէն առաւելագոյն քուէ ստացողները:

### ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

11.— Գործադիր ժողովը կը բաղկանայ հինգ անդամներէ որոնց երեքը կ'ընտրուին Քաղ. ժողովէն եւ երկուքը Աղքատախնամ Ընկերութեան Ընդհ. ժողովէն:

12.— Գործադիր ժողովը կրնայ ի հարկին իրեն օժանդակ Յանձնաժողովներ կազմել:

13.— Գործադիր ժողովը իր Դիւանը կը կազմէ իր ամբողջական կազմը ստանալէ յետոյ:

14.— Գործադիր ժողովը վարչական մարմին մըն է, որ Ազգային Իշխանութենէն Աղքատաց յատկացեալ վարկին եւ ախտոնէին համաձայն եւ իրեն գծուած սահմանին մէջ կը վարէ Ընկերութեան բոլոր գործերը, կը գանձէ հասոյթները, կը կատարէ նպաստներու բաշխումը եւ կարօտեալներու վիճակին քննութիւնը:

15.— Գործադիր ժողովի անդամները թէ անհատապէս եւ թէ հաւաքաբար պատասխանատու են իրենց բոլոր գործառնութեանց համար Ընկեան Ընդհ. ժողովին:

16.— Գործադիր ժողովի պաշտօնավարութեան շրջանը երկու տարի է եւ անդամները վերընտրելի են:

17.— Ընդհ. ժողովը՝ Գործադիր ժողովոյ երկու անդամները ընտրած ատեն, քուէի առաւելութեան կարգով կամ յատուկ ընտրութեամբ երկու փոխ անդամներ եւս կ'ընտրէ, հրաժարողներու տեղ պաշտօնի կոչելու համար:

18.— Հրաժարեալ Գործադիր ժողովը իր պաշտօնը պարտի շարունակել մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

## ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

19.— Ընդհ. ժողովը իր տարեկան նիստին մէջ կ'ընտրէ երեք անդամէ բաղկացեալ հաշուեքննիչ յանձնաժողով մը՝ քննելու եւ Ընդհանուր ժողովի Դիւանին միջոցաւ Ընդհ. ժողովին ներկայացնելու համար Գործադիր ժողովի ընթացիկ տարուան հաշիւները:

## ՀԱՍՈՅԹՆԵՐ

20.— Ընկերութեանս հասոյթներն են,  
Ա. Անդամավճարները,



Բ. Պատկ. Թեմական Ժողովի կողմէ աղքատաց համար յատկացեալ վարկը.

Գ. Նուէրներ եւ կտակներ.

Դ. Աղքատախնամի անունով տեղական Իշխանութիւններէն արտօնուած վիճակահանութիւնը.

Ե. Հանգանակութիւններ եւ այլ բացառիկ հասոյթներ, ինչպէս ներկայացումներ, հանդէսներ եւայլն:

21.— Ընկերութեանս ընդհանուր հասոյթին 50%ը Եգիպտական Քուէտի Ֆօնսի-յէի արժեթեւոյթերու վերածուելով, իբրեւ պահեստի գումար ի պահ պիտի դրուի առաջնակարգ դրամատան մը մէջ, Ազգային Առաջնորդարանի միջոցաւ:

Սոյն պահեստի գումարին գործածութիւնը Ընդհանուր Ժողովով միայն կ'որոշուի եւ որոշումը կ'երթարկուի Քաղ. Ժողովոյ գրաւոր հաստատութեանը:

## ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ

### ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ

22.— Ազգ. Իշխանութեանց եւ Ընկերութեան միջեւ 1917 ին կայացած համաձայնութեամբ՝

Ա. Աղքատախնամ Ընկերութեան վրատահուած է, Աղքատաց Հոգաբարձութեան գործը եւ Պատկ. Թեմական Ժողովի կողմէ աղքատներու հոգածութեան համար սահմանուած վարկին մատակարարութիւնը, Ընկերութեան կազմը պահելով:

Բ. Յանուս Ազգ. Իշխանութեանց Գահիրէի թեմին Քաղաքական Ժողովը կ'ընտրէ Գործադիր Ժողովի երեք անդամները՝ որոնք պայման չէ որ Ընկերութեան անդամներէն ըլլան այլ յետ ընտրութեան պարտին անդամագրուիլ ընկերութեան:

23. — Գործադիր Ժողովի այն անդամները որոնք Քաղաքական Ժողովէն կ'ընտրուին, համահաւասար իրաւունք կը վայելեն:

24. — Գործադիր Ժողովը պարտի իր տարեկան համարաւորութիւն եւ հաշիւը ներկայացնել նաեւ Քաղ. Ժողովին, առ ի բնութիւն եւ ի վաւերացում:

25. — Գործադիր Ժողովը՝ Պատկ. Թեմական Ժողովի կողմէ սահմանուած վարկէն աւելի չի կրնար ծախսել, առանց կանխաւ վարկ խնդրելու:

26. — Ընկերութեանս բոլոր տոմարները եւ ատենագրութեան տետրակները միշտ բաց պէտք է ըլլան Քաղ. Ժողովոյ եւ Առաջնորդարանի հաշուեքննիչին առջեւ:

27. — Եթէ Աղքատախնամի Ընդհ. եւ Գործադիր Ժողովները թերանան իրենց պաշտօնին մէջ, մասնաւորապէս համարաւորութիւն չկատարելով իրենց գործառնութեանց մասին, Քաղ. Ժողովը իրաւունք



ունի ի կարգ հրաւիրելու զանոնք եւ եթէ անոնց պաշտօնավարութիւնը վնասակար նկատուի, Քաղ. Ժողովը կը լուծէ զանոնք եւ Նախագահը Ընդհ. Ժողովը ի նիստ կը հրաւիրէ, ընտրելու համար նոր Դիւան կամ Գործադիր Ժողով:

## Լ Ո Ի Մ Ո Ի Մ

28.— Աղքատախնամ Ընկերութիւնը իր գոյութիւնը կը պահէ ցորչափ 20է աւելի անդամ ունի բաժնեգին վճարող, իսկ երբ 20է պակաս ըլլայ անդամներուն թիւը, Քաղ. Ժողովը տէր կը դառնայ Ընկերութեան բոլոր շարժուն եւ անշարժ ստացուածքներուն եւ զանոնք կը գործածէ Ընկերութեան նպատակին՝ իր յարմար դատած եղանակով:

## Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

29.— Ներկայ կանոնագրութիւնը վերաքննելի է, բացի առաջին յօդուածէն:

Վերաքննութիւնը կը կատարուի Ընդհանուր Ժողովի կողմէ եւ գործադրելի է Քաղաքական Ժողովի փաւերացումէն յետոյ:

---

**Պատ. Բաղ. Ժողովին 17 Յուլիս 1933ի  
նիստին մէջ Աղբատախնամ Ընկերութեան ներ-  
կայ Կանոնադիր-Ծրագիրը քննութեան առ-  
նուելով հաստատուած եւ գործադրութեաց դը-  
նել որոշուած է:**

**ԱՌԱՋ . ՓՈԽԱՆՈՐԴ  
ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՅ**

20 Յուլիս 1933

**ՄԱՄԱՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

**Քանիքէ**